ՊԱՏՄՈՂԱԿԱՆ ՀՆՉԱԴԱՍՈՒԹՅԱՆ ՀՆՉԵՐԱՆԳԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԳՐԱԿԱՆ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

ՍԵՎԱԿ ՂՈՒԿԱՍՅԱՆ

Լեզվական հաղորդակցական տիպերի ճիշտ առանձնացումը և ուսումնասիրումը կարևոր է ոչ միայն ընդհանուր լեզվաբանական տեսության զարգացման, այլև տվյալ լեզվի գործնական ու տեսական նպատակների համար։ Լեզվաբանները այլևայլ մոտեցում ունեն այս խնդրի նկատմամբ և առանձնացնում են տարբեր քանակի հաղորդակցական տիպեր։ Լեզվաբանական գրականության մեջ սովորաբար տարբերակում են հաղորդակցական չորս տիպեր՝ պատմողական, հարցական, հրամայական և բացականչական։ Պատմողական հնչադասությունները (սրանք նախադասության արտասանական տարբերակներ են) գործածվելու ավելի մեծ հաճախականություն ունեն։ Այս տեսակետից էլ կարևոր է այդ հնչադասությունների հնչերանգի ուսումնասիրությունը։

Ինչպես մյուս հաղորդակցական տիպերում, պատմողական հնչադասություններում ևս առանձնացվում են մի շարք ենթատեսակներ, որոնք ունեն լեզվական յուրատեսակ կառուցվածք և յուրահատուկ հնչերանգային դրսևորում։ Ընդհանուր առմամբ մենք ուսումնասիրել ենք պատմողական հնչադասությունների երեք տեսակ, որոնք համապատասխանաբար անվանում ենք՝ բուն պատմողական, փաստագրական պատմողական և ցուցադրական պատմողական։ Բուն պատմողական են այն հնչադասությունները, որոնց միջոցով խոսողը դիմացինին հաղորդում է ինչ-որ ինֆորմացիա, որևէ կատարված, կատարվող կամ կատարվելիք իրողություն կամ եղելություն։ Այդպիսի հնչադասություններում ստորոգյալը հիմնականում արտահայտվում է բայի դիմավոր ձևերով (Երկար օրեր անցան, Նրանք ուրախ զրուցում են)։ Փաստագրական են այն հնչադասությունները, որոնց միջոցով խոսողը արձանագրում է որևէ փաստ, առարկա կամ երևույթ (Տնակը պատրաստ է, Ուշ աշուն է)։ Այսպիսի հնչադասություններում ստորոգյալը հիմնականում բաղադրյալ է։ Ցուցադրական են այն հնչադասությունները, որոնց միջոցով խոսողը դիմացինի ուշադրությունը հրավիրում է ինչ-որ առարկայի, երևույթի և այլնի վրա։ Դրանցում ենթական անպայման արտահայտվում է որևէ ցուցական դերանունով, ավելի հաճախ՝ սա, դա, այս, այդ դերանուններով (Սա ծաղիկ է, Դա գեղեցիկ է)։

Պատմողական հնչադասությունների տակ առանձնացվում են նաև այնպիսի ենթատեսակներ, ինչպես թվարկումը (Տարին ունի չորս եղանակ՝ գարուն, ամառ, աշուն, ձմեռ), նայտարարությունը (Վաղը ջերմաստիճանը Երևանում զգալի նվազելու է), պատասխանը (Որտե՞ղ ես ապրում։— Քաղաքո՛ւմ եմ ապրում) և այլն։ Նշված ենթատեսակներից ամենաբնորոշը բուն պատմողական հնչադասություններն են, ուստի սահմանափակվենք այս ենթատեսակի հնչերանգը նկարագրելով։ Պատմողական հնչադասության հնչերանգը ուսումնասիրել է Ա. Արամյանը, որի աշխատանքը նյութի ընդգրկումով և ուսումնասիրության եղանակով զգալի տարբերվում է մեր հետազոտությունից[1]։

Ուսումնասիրությունը կատարել ենք փորձառական եղանակով Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի փորձառական հնչյունաբանության փորձասրա-

---

1 Ա. Մ. Արամյան, Պատմողական և հրամայական նախադասությունների հնչերանգը («Հնչերանգը և շեշտը ժամանակակից հայերենում», Երևան, 1978, էջ 12)։

հում։ Ձայնագրել ենք 19 հնչադասություն՝ երեք հաղորդավարների ընթերցմամբ, որոնք ծնվել և կրթություն են ստացել Երևանում։ Ձայնագրել ենք հետևյալ հնչադասությունները՝ Երկար պատմեց, Շատ երկար կարդաց, Երկար օրեր անցան, Սարսափ անցավ քազաքով, Սպիտակ մազեր ունես, Երկար նամփա անցավ, Անդրանիկը ետ նայեց, Նա քեզ նկատեց, Քեզ բաժին չմնաց, Հասավ Բասենի դաշտ, Անդոն զորձի անցավ, Մթնոլորտը պայծառացավ, Աքորը շտապով ներկեց, Ձեռքը դրեց նակատիս, Գեղեցիկ կին էր Սոսեն, Եկել ես ննդուկ տեսնելու, Մեկնումը մահ է արդեն, Սոսեն բանեց Սերոբի թևը, Մորուք Կարոն քոսավ ձիուց։ Այնուհետև կատարել ենք ձայնագրված հնչադասությունների անհրաժեշտ լսողական վերլուծություն։ Հետազոտության ընթացքում առանձնակի ուշադրություն ենք դարձրել հիմնական տոնի հաճախականության, միջուկի, ետմիջուկի, նախամիջուկի տոնալ կառուցվածքի վրա (միջուկը հնչադասության գլխավոր շեշտ կրող վանկն է, նախամիջուկը՝ միջուկին նախորդող վանկը, ետմիջուկը՝ միջուկին հաջորդող վանկը)։ Նկատի ունենալով, որ յուրաքանչյուր մարդ ունի իր անհատական ձայնային յուրահատկությունները, մենք հնչերանգը ուսումնասիրել ենք հատկապես ըստ հարաբերական ձայնաբանական հատկությունների, որոնք ստացվում են ձայնի հաճախականության, ուժգնության և տևողության բացարձակ արժեքներից (հնչադասության հաճախականության ձայնածավալ, միջուկի հաճախականության ձայնածավալ, հնչադասության ուժգնության ձայնածավալ, հնչադասության վանկի միջին տևողություն և այլն)[2]։ Երբ միջուկի հաճախականության ձայնածավալի թվային արժեքի առջև դրվում է — նշանը, ապա նշանակում է, որ տոնը միջուկում նվազում է, երբ + նշանը՝ աճում է։

Յուրաքանչյուր հաղորդավարի հիմնական տոնի շարժումը ներկայացրել ենք տարբեր կորերով. առաջին հաղորդավարի համար ընտրել ենք գիծ-կետ (—.—) կորը, երկրորդի համար՝ գիծ-երկու կետ (—..—) կորը, երրորդի համար՝ միայն կետերը (....), վերջապես հոծ գիծը՝ ընդհանուրի համար։ Դիագրերում հիմնական տոնի շարժումը տվել ենք ըստ վանկերի. ընդ որում վանկերի տևողությունները վերցրել ենք իրար հավասար։ Բաղաձայնակիր հատվածներում տոնի շարժումը տրվում է ընդհատվող գծիկներով, որովհետև այդ հատվածներում ձայնալարերը չեն թրթռում, և տոնը բացակայում է։ Պատմողական հընչադասությունների արտասանության դեպքում առաջին հաղորդավարի ձայնաշարը փոփոխվում է 80—170 հց սահմաններում, որը կազմում է 13 կիսատոն, երկրորդինը՝ 100—220 հց՝ 13 կիսատոն, իսկ երրորդինը՝ 80—150 հց՝ 11 կիսատոն։

Այժմ փորձառական ողջ նյութից նկարագրենք երկու հնչադասության հընչերանգը, ապա կընդհանրացնենք և ի մի կբերենք ուսումնասիրված բոլոր հընչադասությունների տվյալները միասին վերցրած։

1. Երկար պատմեց։ Այս հնչադասության հիմնական տոնի հաճախականության շարժման ուղղությունը առաջին երկու հաղորդավարների դեպքում բարձրացող-իջնող է, իսկ երրորդի դեպքում՝ բարձրացող-իջնող-հավասար (գծ. 1)։ Հնչադասության նախամիջուկում տոնի շարժումը բոլոր երեք հաղորդավարների դեպքում էլ բարձրացող է, միջուկում՝ իջնող, ետմիջուկում՝ առաջին երկուսի դեպքում իջնող է, երրորդի դեպքում՝ հավասար։

Առաջին հաղորդավարի հաճախականության մակարդակը հնչադասության սկզբում 100 հց է, երկրորդինը՝ 120, երրորդինը՝ 80 (հաճախականության մակարդակը տվյալ կետի հաճախականության մեծությունն է)։ Առաջին հաղորդավարի հնչադասության հաճախականության ձայնածավալը 9 կիսատոն է, երկրորդինը՝ 11, երրորդինը՝ 4։ Առաջին հաղորդավարի միջուկի հաճախակա-

---

2 Թե ինչպես են որոշվում համապատասխան ձայնաբանական հատկությունները, տե՛ս Ս. Ղուկասյան, Հարցական նախադասությունների հնչերանգը («Հնչերանգը և շեշտը ժամանակակից հայերենում», էջ 82)։

նության ձայնածավալը -3 կիսատոն է, երկրորդինը՝ -2, երրորդինը՝ -4 կիսատոն։ «Երկար պատմեց» հնչադասության մեջ որպես միջուկ հանդես է դալիս երկրորդ՝ -կար, վանկը։ Առաջին հաղորդավարի ետմիջուկային վանկի հաճախականության նվազման ձայնածավալը 3 կիսատոն է, երկրորդինը՝ 8, երրորդինը՝ 0։ Առաջին հաղորդավարի հնչադասության վերջին վանկի հաճախականության ձայնածավալը -4 կիսատոն է, երկրորդինը՝ -3, երրորդինը՝ 0։ Բոլոր երեք հաղորդավարների դեպքում էլ միջուկը արտահայտվում է տոնի և ուժգնության միջոցով։ Առաջին հաղորդավարի միջուկում և ետմիջուկում տոնը նվազում է 3, իսկ նախամիջուկում աճում է 7 կիսատոն։ Միջուկի առավելագույն ուժգնությունը 34 դբ է, որը 1 դբ-ով մեծ է նախամիջուկինից և 4 դբ-ով՝ ետմիջուկինից։ Երկրորդ հաղորդավարի միջուկում տոնը նվազում է 2 կիսատոն, ետմիջուկում՝ 6, իսկ նախամիջուկում աճում է 8 կիսատոն։ Միջուկի առավելագույն ուժգնությունը 36 դբ է, որը հավասար է նախամիջուկինին և 4 դբ-ով մեծ է ետմիջուկինից։ Երրորդ հաղորդավարի տոնը միջուկում նվազում է 4, նախամիջուկում աճում է 4 կիսատոն, իսկ ետմիջուկում մնում է հավասար։ Միջուկի առավելագույն ուժգնությունը 30 դբ է, որը 1 դբ-ով փոքր է նախամիջուկինից և 4 դբ-ով մեծ է ետմիջուկինից։ Բոլոր երեք հաղորդավարների դեպքում էլ առավելագույն հաճախականությունը տեղայնանում է առաջին (եր) վանկում, իսկ նվազագույնը՝ վերջին (մեց) վանկում։ Երրորդ հաղորդավարի դեպքում հաճախականությունը իր նվազագույն աստիճանին է հասնում երկրորդ վանկում և այդպես էլ շարունակվում է մինչև վերջ։



Գծ. 1. Հիմնական տոնի շարժումը «Երկար պատմեց» հնչադասությունում։

Առաջին հաղորդավարի առավելագույն ուժգնությունը 35 դբ է, երկրորդինը՝ 36, երրորդինը՝ 31։ Առաջին հաղորդավարի հնչադասության ուժգնության ձայնածավալը 15 դբ է, երկրորդինը՝ 7, երրորդինը՝ 5։ Բոլոր երեք հաղորդավարների դեպքում էլ առավելագույն ուժգնությունը տեղայնանում է առաջին (եր) վանկում, իսկ նվազագույնը՝ վերջին (մեց) վանկում։

Առաջին հաղորդավարի ողջ հնչադասության տևողությունը 920 մվրկ է, երկրորդինը՝ 1080, երրորդինը՝ 1000։ Առաջին հաղորդավարի հնչադասության վանկի միջին տևողությունը 230 մվրկ է, երկրորդինը՝ 270, երրորդինը՝ 250։ Առաջին հաղորդավարի միջուկային վանկի տևողությունը 220 մվրկ է, երկրորդինը՝ 240, երրորդինը՝ 210։ Առաջին հաղորդավարի ՄՎՏ (միջուկային վանկի տևողություն) հարաբերությունը ՎՄՏ (վանկի միջին տևողություն) 0,96 է, երկրորդինը՝ 0,89, երրորդինը՝ 0,84։

2. Շատ երկար կարդաց: Այս հնչադասության հիմնական տոնի հաճախականության շարժման ուղղությունը առաջին և երկրորդ հաղորդավարների դեպքում բարձրացող-իջնող է, իսկ երրորդի դեպքում՝ բարձրացող-իջնող-հավասար. ընդ որում տոնը հավասար սկսում է շարժվել երրորդ (կար) վանկից սկսած (գծ. 2)։

Նախամիջուկում տոնի շարժումը առաջին և երրորդ հաղորդավարների դեպքում բարձրացող է, իսկ երկրորդի դեպքում՝ իջնող։ Միջուկում տոնի շարժումը բոլոր երեք հաղորդավարների դեպքում էլ իջնող է (որպես միջուկ հանդես է դալիս –կար վանկը), եմիջուկում՝ առաջին և երկրորդ հաղորդավարների դեպքում իջնող է, երրորդի դեպքում՝ հավասար։ Առաջին հաղորդավարի հաճախականության մակարդակը հնչադասության սկզբում 130 հց է, երկրորդինը՝ 160, երրորդինը՝ 90։ Առաջին հաղորդավարի հնչադասության հաճախականության ձայնածավալը 8 կիսատոն է, երկրորդինը՝ 12, երրորդինը՝ 4։ Առաջին հաղորդավարի միջուկի հաճախականության ձայնածավալը -1 կիսատոն է, երկրորդինը՝ -5, երրորդինը՝ -4։ Որպես միջուկ հանդես է դալիս երկրորդ (կար) վանկը։ Առաջին հաղորդավարի եմիջուկային վանկի հաճախականության նվազման ձայնածավալը 5 կիսատոն է, երկրորդինը՝ 2, երրորդինը՝ 0։ Առաջին և երկրորդ հաղորդավարների հնչադասության վերջին վանկի հաճախականության ձայնածավալը -2 կիսատոն է, երրորդինը՝ 0։ Բոլոր երեք հաղորդավարների դեպքում էլ առավելագույն հաճախականությունը տեղայնանում է երկրորդ (եր) վանկում, իսկ նվազագույնը՝ վերջին (դաց) վանկում։



Գծ.2. Հիմնական տոնի շարժումը «Շատ երկար կարդաց» հնչադասությունում։

Առավելագույն ուժգնությունը բոլոր երեք հաղորդավարների դեպքում էլ 32 դբ է։ Առաջին հաղորդավարի հնչադասության ուժգնության ձայնածավալը 12 դբ է, երկրորդինը՝ 10, երրորդինը՝ 8։ Առաջին և երկրորդ հաղորդավարների դեպքում առավելագույն ուժգնությունը տեղայնանում է առաջին (եր) վանկում, իսկ երրորդի դեպքում՝ երկրորդ (կար) վանկում։ Նվազագույն ուժգնությունը բոլոր երեքի դեպքում էլ տեղայնանում է վերջին (դաց) վանկում։ Առաջին հաղորդավարի ողջ հնչադասության տևողությունը 1240 մվրկ է, երկրորդինը՝ 1270, երրորդինը՝ 1180։ Առաջին հաղորդավարի հնչադասության վանկի միջին տևողությունը 240 մվրկ է, երկրորդինը՝ 254, երրորդինը՝ 235։ Առաջին հաղորդավարի միջուկային վանկի տևողությունը 210 մվրկ է, երկրորդինը՝ 200, երրորդինը՝ 220։ Առաջին հաղորդավարի ՄՎՏ հարաբերությունը ՎՄՏ 0, 88 է, երկրորդինը՝ 0,79, երրորդինը՝ 0,94։ Այժմ անցնենք ուսումնասիրված ողջ նյութի ամբողջական նկարագրությանը։

Հաճախականության մակարդակը հնչադասության սկզբում։ Առաջին հաղորդավարի հնչադասության սկզբի հաճախականության մակարդակը փո-

փոխվում է 100—140 հց սահմաններում, այսինքն՝ նվազագույն մեծությունը 100 հց է (Երկար պատմեց), առավելագույնը՝ 140 (Սպիտակ մազեր ունես)։ Այն ավելի հաճախ փոփոխվում է 110—120 հց սահմաններում։ Երկրորդ հաղորդավարի հնչադասության սկզբի հաճախականության մակարդակը փոփոխվում է 120—160 հց սահմաններում, այսինքն՝ նվազագույն մեծությունը 120 հց է (Երկար ճամփա անցավ), առավելագույնը՝ 160 (Շատ երկար կարդաց)։ Այն ավելի հաճախ փոփոխվում է 120—150 հց սահմաններում։ Երրորդ հաղորդավարի հնչադասության սկզբի հաճախականության մակարդակը փոփոխվում է 80—110 հց սահմաններում, այսինքն՝ նվազագույն մեծությունը 80 հց է (Անդրանիկը ետ նայեց), առավելագույնը՝ 110 (Սոսեն բռնեց Սերոբի թևը)։ Այն հիմնականում փոփոխվում է 80—100 հց սահմաններում։

Նկատելի է, որ առաջին և երկրորդ հաղորդավարների հնչադասության սկզբի հաճախականության մակարդակը նրանց ձայնի հաճախականության ստորին աստիճանին չի հասնում։ Առաջին հաղորդավարի հաճախականության ստորին աստիճանը 80 հց է, իսկ հաճախականության մակարդակը՝ 100 հց։ Երկրորդ հաղորդավարի հաճախականության ստորին աստիճանը 100 հց է, իսկ հաճախականության մակարդակը՝ 120։ Ի տարբերություն առաջին երկուսի, երրորդ հաղորդավարինը երկու դեպքում էլ ընդունում է 80 հց արժեքը։

Հնչադասության հաճախականության ձայնածավալը: Առաջին հաղորդավարի հնչադասության հաճախականության ձայնածավալը փոփոխվում է 2—13 կիսատոնի սահմաններում, այսինքն՝ նվազագույն մեծությունը 2 կիսատոն է (Քեզ բաժին չմնաց), իսկ առավելագույնը՝ 13 (Մթնոլորտը պայծառացավ)։ Այն ավելի հաճախ փոփոխվում է 7—10 կիսատոնի սահմաններում։ Երկրորդ հաղորդավարի հնչադասության հաճախականության ձայնածավալը փոփոխվում է 5—13 կիսատոնի սահմաններում, այսինքն՝ նվազագույն մեծությունը 5 կիսատոն է (Երկար ճամփա անցավ), առավելագույնը՝ 13 (Մեկնումը մահ է արդեն)։ Այն հիմնականում փոփոխվում է 10—12 կիսատոնի սահմաններում։ Երրորդ հաղորդավարի հնչադասության հաճախականության ձայնածավալը փոփոխվում է 2—11 կիսատոնի սահմաններում, այսինքն՝ նվազագույն մեծությունը 2 կիսատոն է (Սպիտակ մազեր ունես), առավելագույնը՝ 11 (Անդրանիկը ետ նայեց)։ Այն հիմնականում փոփոխվում է 5—7 կիսատոնի սահմաններում։

Միջուկի հաճախականության ձայնածավալը: Միջուկի հաճախականության ձայնածավալը ցուցաբերում է շատ տարաբնույթ պատկեր. այն աճող է, նվազող և հավասար։ 54 հնչադասություններից 35-ի դեպքում նվազող է, 9-ի դեպքում՝ աճող, 10-ի դեպքում՝ հավասար։ Հարց է ծագում՝ ո՞ր դեպքում է, որ միջուկի հաճախականության ձայնածավալը աճող է և ո՞ր դեպքում՝ նվազող։ Դիտարկումները ցույց են տալիս, որ հիմնականում, երբ միջուկը գտնվում է հնչադասության կեսից դեպի ձախ, տոնը աճող է, երբ գտնվում է դեպի աջ՝ նվազող է։ Այն դեպքում, երբ միջուկի տոնը նվազող է՝ առաջին հաղորդավարի միջուկի հաճախականության ձայնածավալը փոփոխվում է -10—-1 կիսատոնի սահմաններում, այսինքն՝ նվազագույն մեծությունը -10 կիսատոն է (Շատ երկա՛ր կարդաց), առավելագույնը՝ -1 կիսատոն (Մթնոլորտը պայծառացա՛վ)։ Այն հիմնականում փոփոխվում է -5 — -2 կիսատոնի սահմաններում։ Երկրորդ հաղորդավարի միջուկի հաճախականության ձայնածավալը փոփոխվում է -9 — -1 կիսատոնի սահմաններում, այսինքն՝ նվազագույն մեծությունը -9 կիսատոն է (Մեկնումը մա՛հ է արդեն), առավելագույնը՝ -1 (Գեղեցիկ կի՛ն էր Սոսեն)։ Այն հիմնականում փոփոխվում է -5 — -2 կիսատոնի սահմաններում։ Երրորդ հաղորդավարի միջուկի հաճախականության ձայնածավալը փոփոխվում է -6 — -2 կիսատոնի սահմաններում, այսինքն՝ նվազագույն մեծությունը -6 կիսատոն է (Գեղեցիկ կի՛ն էր Սոսեն), առավելագույնը՝ -2 (Անդրանիկը ե՛տ նայեց)։ Այն հիմնականում փոփոխվում է -5 — -2 կիսատոնի սահմաններում։

Բոլոր երեք հաղորդավարների դեպքում էլ, եթե միջուկում տոնը աճում է, ապա աճում է +2—+5 կիսատոնի սահմաններում։

Եռմիջուկային վանկի հաճախականության նվազման ձայնածավալը։ Առաջին հաղորդավարի եռմիջուկային վանկի հաճախականության նվազման ձայնածավալը փոփոխվում է 0—6 կիսատոնի սահմաններում, այսինքն՝ նվազագույն մեծությունը 0 է (Սոսեն բռնեց Սերորի թևը), առավելագույնը՝ 6 (Եկել ես ճնճղո՛ւկ տեսնելու)։ Այն ավելի հաճախ փոփոխվում է 2—5 կիսատոնի սահմաններում։ Երկրորդ հաղորդավարի եռմիջուկային վանկի հաճախականության նվազման ձայնածավալը փոփոխվում է 0—9 կիսատոնի սահմաններում, այսինքն՝ նվազագույն մեծությունը 0 է (Սպիտակ մազե՛ր ունես), առավելագույնը՝ 9 (Հասավ Բասենի՛ դաշտ)։ Այն հիմնականում փոփոխվում է 2—6 կիսատոնի սահմաններում։ Երրորդ հաղորդավարի եռմիջուկային վանկի հաճախականության նվազման ձայնածավալը փոփոխվում է 0—7 կիսատոնի սահմաններում, այսինքն՝ նվազագույն մեծությունը 0 է (Երկա՛ր պատմեց), առավելագույնը՝ 7 (Աթո՛ռը շտապով ներկեց)։ Այն հիմնականում փոփոխվում է 0—5 կիսատոնի սահմաններում։

Հնչադասության վերջին վանկի հաճախականության ձայնածավալը։ Առաջին հաղորդավարի հնչադասության վերջին վանկի հաճախականության ձայնածավալը փոփոխվում է -10—0 կիսատոնի սահմաններում, այսինքն՝ նվազագույն մեծությունը-10 է (Սոսեն բռնեց Սերորի թևը), առավելագույնը՝ 0 (Մթնոլորտը պայծառացավ)։ Այն հիմնականում փոփոխվում է -5 — -2 կիսատոնի սահմաններում։ Երկրորդ հաղորդավարի հնչադասության վերջին վանկի հաճախականության ձայնածավալը փոփոխվում է -9—0 կիսատոնի սահմաններում, այսինքն՝ նվազագույն մեծությունը -9 է (Անգոն գործի՛ անցավ), առավելագույնը՝ 0 (Հասավ Բասենի՛ դաշտ)։ Այն հիմնականում փոփոխվում է -6 — -2 կիսատոնի սահմաններում։ Երրորդ հաղորդավարի հնչադասության վերջին վանկի հաճախականության ձայնածավալը փոփոխվում է -4—0 կիսատոնի սահմաններում, այսինքն՝ նվազագույն մեծությունը -4 է (Գեղեցիկ կի՛ն էր Սոսեն), առավելագույնը՝ 0 (Նա քեզ նկատե՛ց)։ Այն ավելի հաճախ փոփոխվում է -2—0 կիսատոնի սահմաններում։

Հնչադասության առավելագույն ուժգնությունը։ Առաջին հաղորդավարի հնչադասության առավելագույն ուժգնությունը փոփոխվում է 29—38 դբ սահմաններում, այսինքն՝ նվազագույն մեծությունը 29 դբ է (Եկել ես ճնճղուկ տեսնելու), առավելագույնը՝ 38 դբ (Քեզ բաժին չմնաց)։ Այն հիմնականում փոփոխվում է 34—36 դբ սահմաններում։ Երկրորդ հաղորդավարի հնչադասության առավելագույն ուժգնությունը փոփոխվում է 31—36 դբ սահմաններում, այսինքն՝ նվազագույն մեծությունը 31 դբ է (Եկել ես ճնճղուկ տեսնելու), առավելագույնը՝ 36 դբ (Երկար պատմեց)։ Այն հիմնականում փոփոխվում է 34—35 դբ սահմաններում։

Հնչադասության ուժգնության ձայնածավալը։ Առաջին հաղորդավարի հնչադասության ուժգնության ձայնածավալը փոփոխվում է 2—18 դբ սահմաններում, այսինքն՝ նվազագույն մեծությունը 2 դբ է (Գեղեցիկ կին էր Սոսեն), առավելագույնը՝ 18 (Հասավ Բասենի դաշտ)։ Այն հիմնականում փոփոխվում է 9—15 դբ սահմաններում։ Երկրորդ հաղորդավարի հնչադասության ուժգնության ձայնածավալը փոփոխվում է 5—11 դբ սահմաններում, այսինքն՝ նվազագույն մեծությունը 5 դբ է (Աթոռը շտապով ներկեց), առավելագույնը՝ 11 (Ձեռքը դրեց ճակատիս)։ Այն հիմնականում փոփոխվում է 7—10 դբ սահմաններում։ Երրորդ հաղորդավարի հնչադասության ուժգնության ձայնածավալը փոփոխվում է 4—20 դբ սահմաններում, այսինքն՝ նվազագույն մեծությունը 4 դբ է (Նա քեզ նկատեց), առավելագույնը՝ 20 դբ (Սոսեն բռնեց Սերորի թևը)։ Այն հիմնականում փոփոխվում է 6—10 դբ սահմաններում։

Միջուկի արտահայտությունը։ Ուսումնասիրության ընթացքում որոշակի ուշադրություն ենք դարձրել նաև միջուկի արտահայտման ձևերին։ Դիտար-

կումները ցույց են տալիս, որ միջուկը գլխավորապես արտահայտվում է հիմնական տոնի և ուժգնության միջոցով. ընդ որում միջուկի ընդգծումը կատարվում է նախամիջուկում, միջուկում և ետմիջուկում տոնի և ուժգնության փոփոխությամբ։ Կան դեպքեր, երբ տոնը զգալիորեն փոփոխվում է և՛ նախամիջուկում, և՛ միջուկում, և՛ ետմիջուկում։ Երբեմն տոնը նախամիջուկում անփոփոխ է մնում և փոփոխվում է միայն միջուկում ու ետմիջուկում, երբեմն էլ անփոփոխ է ետմիջուկում և փոփոխվում է միջուկում ու նախամիջուկում, պատահում է նաև, որ անփոփոխ է միջուկում և փոփոխվում է նախամիջուկում ու ետմիջուկում։ Նման ձևով ուժգնության հակադրությունը միջուկում կատարվում է հետևյալ կերպ. 1) այն մեծ է և՛ նախամիջուկինից, և՛ ետմիջուկինից, 2) այն մեծ է միայն մեկից և հավասար մյուսին, 3) այն փոքր է երկուսինից, 4) այն փոքր է մեկից և հավասար մյուսին, 5) այն մեծ է մեկից և փոքր՝ մյուսինից։ Պետք է նկատի ունենալ, որ այս պարամետրերից մեկը (տոն կամ ուժգնություն) հաճախ հանդես է գալիս որպես միջուկի արտահայտման գլխավոր միջոց, իսկ մյուսը՝ երկրորդական։ Տոնը հանդես է գալիս որպես միջուկի արտահայտման միջոց, երբ նրա մեծությունը 2 կիսատոն է կամ 2-ից մեծ, իսկ ուժգնությունը 2 դբ է կամ 2-ից մեծ։ Բոլորից հաճախ միջուկը արտահայտվում է և՛ տոնով, և՛ ուժգնությամբ։ Թե այդ հակադրությունը կատարվում է նախամիջուկում, միջուկում կամ ետմիջուկում կարևոր չէ։ Կարևորն այն է, որ գոնե մի կետում հակադրություն առաջանա, փսկ հակադրություն կարող է առաջանալ միաժամանակ բոլոր կետերում։ Որպես նկատված երևույթ կարող ենք ասել նաև, որ այն դեպքում, երբ միջուկի արտահայտման գործում տոնը դեր չի կատարում, ապա այդ դեպքում որպես միջուկի արտահայտման միակ միջոց հանդես է գալիս ուժգնությունը։ Մեր ուսումնասիրած նյութում երբեմն միջուկի ձևավորման գործում դեր է խաղում նաև միջուկային վանկի տևողությունը։

Այսպիսով, կատարված ուսումնասիրությունից կարելի է հանգել հետևյալ եզրակացություններին.

1. Պատմողական հնչադասության հիմնական տոնի հաճախականության շարժման ուղղությունը գլխավորապես բարձրացող-իջնող է, սակայն հնչադասության որոշ վանկերում տոնը հաճախ շարժվում է հավասար, որը հիմնական տոնի շարժման ուղղության մեջ զգալի տարբերակվածություն է առաջացնում։ Պատմողական հնչադասության հիմնական տոնի շարժման ուղղությունը կարող է լինել նաև իջնող, որը մեր ուսումնասիրած նյութում շատ հազվադեպ է հանդիպում։

2. Միջուկն արտահայտվում է տոնի և ուժգնության փոփոխությունների միջոցով. ընդ որում էական չէ՝ այդ փոփոխությունները կատարվում են միջուկում, նախամիջուկում, ետմիջուկում, թե բոլորում միաժամանակ, կարևորն այն է, որ նշված վանկերից գոնե մեկում հակադրություն առաջանա մյուսի նկատմամբ (տոնի կամ ուժգնության կամ երկուսինը միաժամանակ)։ Երբ տոնը միջուկում, նախամիջուկում և ետմիջուկում մնում է անփոփոխ, ապա անպայման հակադրություն է առաջանում նշված վանկերի ուժգնությունների միջոցով։

3. Միջուկում տոնի շարժումը կարող է լինել աճող կամ նվազող։ Երբ միջուկը գտնվում է հնչադասության մեջտեղից դեպի ձախ, ապա տոնը աճող է, երբ գտնվում է դեպի աջ, ապա նվազող է։ Երբ միջուկը գտնվում է հնչադասության առաջին վանկում, ապա նրանում տոնը անհրաժեշտաբար աճող է, երբ գտնվում է վերջին վանկում, ապա անհրաժեշտաբար նվազող է։

4. Հնչադասության սկզբի հաճախականության մակարդակը մեծամասամբ խոսողի ձայնի հաճախականության ստորին աստիճանին չի հասնում՝ առնվազն 10 հց-ով տարբերվում է։ Այն ձայնի ցածր ձայնաշար ունեցող հաղորդավարների դեպքում փոփոխվում է 80—120 հց սահմաններում, իսկ բարձր ձայնաշար ունեցողների դեպքում՝ 120—170 հց սահմաններում։

5. Հնչադասության հաճախականության ձայնածավալը ցածր ձայնաշար ունեցող հազորդավարների դեպքում փոփոխվում է միջինը 5—7 կիսատոնի սահմաններում, իսկ բարձր ձայնաշար ունեցողների դեպքում՝ 10—12 կիսատոնի։

6. Միջուկի հաճախականության ձայնածավալը աճում է և նվազում։ Եթե աճում է, ապա՝ միջինը +2—+5 կիսատոնի սահմաններում, եթե նվազում է, ապա՝ միջինը -5 — -2 կիսատոնի սահմաններում։

7. Նոմիջուկային վանկի հաճախականության նվազման ձայնածավալը մնում է անփոփոխ կամ նվազում է, եթե նվազում է, ապա՝ միջինը -5 — -2 կիսատոն։

8. Հնչադասության վերջին վանկի հաճախականության ձայնածավալը միշտ նվազող է, և միջինը ընդունում է -6 — -2 կիսատոն արժեքները։

9. Հնչադասության առավելագույն ուժգնությունը փոփոխվում է, միջինը՝ 32—35 դբ սահմաններում։

10. Հնչադասության ուժգնության ձայնածավալը փոփոխվում է, միջինը՝ 6—12 դբ սահմաններում։

ИНТОНАЦИЯ ПОВЕСТВОВАТЕЛЬНЫХ ФРАЗ В СОВРЕМЕННОМ АРМЯНСКОМ ЯЗЫКЕ

СЕВАК ГУКАСЯН

Резюме

На основе изучения повествовательных фраз современного армянского литературного языка экспериментальным методом были определены акустические характеристики этих фраз, такие, как частотный диапазон фразы, ядра, диапазон интенсивности всей фразы, длительность и т. д. Основные выводы сводятся к следующим пунктам: 1. повествовательные фразы в основном характеризуются повышением тона в начале фразы и понижением в конце; 2. в каждой фразе выделяется один слог—ядро, которое характеризуется повышением тона, если оно находится слева от середины фразы, и понижением, если находится справа от середины фразы; 3. акустически ядро выделяется изменением частоты основного тона и интенсивности по сравнению с предядерными и заядерными слогами; 4. частотный диапазон фразы изменяется в определенных пределах (у каждого диктора), не превышающих однако 13 полутонов.